ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/30

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Էլ-Սա» ՍՊԸ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր)

Մասնակցությամբ՝
«Էլ-Սա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցում, գեոդեզիական գործիքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-19/4-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/209-2020 գրությամբ «Էլ-Սա» ՍՊԸ-ին և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 09.01.2020թ. թիվ ՊՆ/02/15-2020 գրության հիման վրա, 13.01.2020թ.-ին «Էլ-Սա» ՍՊԸ-ին և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/24 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/24 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/30 համարի ծածկագիրը:

18.02.2020թ.-ին և 27.02.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 27.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 09.01.2020թ. թիվ ՊՆ/02/15-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ-Սա» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ հետ/ միջև 15.08.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-19/4-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. դեկտեմբերի 27-ին միակողմանի մասնակի լուծել է ԳՀԱՊՁԲ-19/4-1 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 08.01.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Միևնույն ժամանակ ներկայացվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Էլ-Սա» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Էլ-Սա» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.01.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էլ-Սա» ՍՊԸ-ին և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր)՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ.-ի թիվ 26/26-1/209-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում՝ ներկայանալով հրավիրված նիստերին:

Մասնակիցը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Էլ-Սա» ՍՊ ընկերությանը (հետայսու Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերի, Ընկերության եւ ՀՀ պաշտպանության նախարարության միջեւ 15.08.2019թ կնքված N ԳՀԱՊՁԲ-19/4-1 պայմանագիրը (հետայսու Պայմանագիր) 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ապրանքի մատակարարման ժամկետները 30 օրից ավելի խախտելու հիմքով միակողմանի լուծելու վերաբերյալ առարկում ենք հետեւյալ հիմնավորմամբ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» գնանշման հարցման ծածկագրով հայտերի բացումը տեղի է ունեցել 2019թ. ապրիլի 5-ին, ժամը 11:00-ին:

Մրցույթին ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 1-ին եւ 2-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «էլ-Սա» ՍՊ ընկերությունը: 17.04.2019թ ծանուցմամբ Պատվիրատուն առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել է ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: 2019թ ապրիլի 19-ին Ընկերությունը ներկայացրել է պահանջված անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը: Այնուհետեւ, 2019թ հուլիսի 12-ին, շուրջ 3 ամիս հետո, գնահատող հանձնաժողովը պահանջում է ներկայացնել պարզաբանումներ Ընկերության կողմից ներկայցրած փաստաթղթերի վերաբերյալ: Ընկերությունը մարզաբանումը ներկայացնում է 13.07.2019թ: 25.07.2019թ Պատվիրատուն երկրորդ պարզաբանման մասին է գրություն ներկայացնում, որին ի պատասխան հայտնում ենք, որ հարցադրման վերաբերյալ պատասխանը կտրամադրվի 29.07.2019 թվականի եւ նշված օրն էլ ներկայացնում ենք պարզաբանում:

ՈՒշագրավ հանգամանք է, որ Պատվիրատուի կողմից պահանջված փաստաթղթերը ներկայացնելուց (19.04.2019թ) շուրժ 3 ամիս հետո Պատվիրատուն անդրադառնում է ներկայացրած փաստաթղթերին եւ պարզաբանումներ պահանջում:

Այսպիսով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» գնանշման հարցման ծածկագրով հայտերի բացումը տեղի է ունեցել 2019թ. ապրիլի 5-ին, ժամը 11:00-ին, իսկ Պայմանագիրը կնքվել է 15.09.2019թ (4 ամիս հետո), (ի դեպ այդ ընթացակարգը չի բողոքարկվել):

2019թ օգոստոսի 9-ին Պատվիրատուն ծանուցում է պայմանագիր կնքելու մասին: Ծանուցմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը (12.07.2019թ) Ընկերության կողմից ստորագրվել է մատակարարման պայմանագիրը: 15.08.2019թ կնքված պայմանագրի համաձայն ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված եղել մինչեւ 30.09.2019թ.: Կողմերի միջեւ կնքված փոփոխության համաձայն պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել է մեկ ամսով:

42,24 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ 1-ին չափաբաժնի մատակարարումը պատշաճ իրականացվել է:

Պայմանագրի 2-րդ չափաբաժնի մատակարարումն իրականացնելու համար առուվաճառքի պայմանագիր է կնքվել Չինաստանում գործող ընկերության հետ, գումարը փոխանցվել է (կից պայմանագիր, բանկային փոխանցման հաշիվ), սակայն ապրանքը չի մատակարարվել եւ գումարն էլ Ընկերությանը չի վերադարձվել: Ստեղծված իրավիճակում նախաձեռնել ենք ապրանքը ձեռք բերել այլ ընկերությունից եւ ստանձնած պարտավորությունը կատարել սահմանված ժամկետում: Քանի որ 2-րդ չափաբաժնի

ապրանքի լրակազմում առկա են լիթիումային կուտակիչներ, որոնց դեպքում ոչ բոլոր փոխադրող ընկերություններն են կարողանում տեղափոխել, ուստի ապրանքը ձեռք բերելուց հետո պայմանագրով սահմանված ժամկետում չենք կարողացել իրականացնել մատակարարումը:

2-րդ չափաբաժնի մատակարարվող ապրանքը Հայաստանի Հանրապետությունում է գտնվել 07.12.2019թ եւ 09.12.2019թ բանավոր ծանուցվել է պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչ Ս.Պետրոսյանը, իսկ ՊՆ տեղակալ Մ. Ղամբարյանին գրությամբ հայտնել ենք, որ պայմանագրի 2-րդ չափաբաժնի «Տեղանքի տարբեր մասշտաբի եռաչափ նկարահանող սարք ինքնուրույն տեղակապակցման հնարավորությամբ» մատակարարումը չենք կարողացել իրականացնել պայմանագրով նախատեսված ժամկետում, պայմանավորված արտադրական եւ ներկրման ժամանակ առաջացած խնդիրներով հանձինս ապրանքի լրակազմում կան լիթիումային կուտակիչներ, որոնց ոչ բոլոր տրանսպորտային ընկերություններն են կարողանում տեղափոխել: Այնուամենայնիվ վերը նշված ապրանքը արդեն իսկ ամբողջությամբ գտնվում է Հայաստանում մեր ընկերության պահեստում, եւ մենք պատրաստ ենք այն անմիջապես մատակարարել պատվիրատուին:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը նշված ապրանքի մատակարարումն իրականացնելու համար:

09.12.2019թ գրության վերաբերյալ գրավոր դիրքորոշում թեեւ չի տրամադրվել, սակայն պատասխանատուն Ս.Պետրոսյանը բանավոր հայտնել է, որ մատակարարվող ապրանքը չի ընդունում, քանի որ «սպասում է վերադասի հրահանգին», այնուհետեւ նույն անձը մոտ մեկ շաբաթ ժամանակ ձգելով բանավոր տեղեկացրել է, որ «չեմ հասցնի կատարել անհրաժեշտ գործողությունները կապված ապրանքը ընդունելու հետ»:

18.12.2019թ գրավոր դիմել ենք ՊՆ նախարարին եւ հայտնել քանի որ 15.08.2019թ կնքված մատակարարման թիվ ԳՀԱՊՁԲ-19/4-1 պայմանագիրը ուժի մեջ է Ընկերությունը պատրաստ է իրականացնել մատակաարումը ցանկացած ժամանակ:

Միաժամանակ իրազեկել ենք, որ Ընկերության կողմից կատարվել է շուրջ 12 մլն դրամի ներդրում վերոգրյալ ապրանքը ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ձեռք բերելու եւ ներմուծելու նպատակով (նշված ապրանքատեսակը այլ ոլորտներում իրացնելու հնարավորությունը չափազանց սահմանափակ է): Նկատի ունենալով որ մատակաարվող ապրանքի ձեռքբերման կարիքը դեռեւս չի վերացել խնդրում ենք Ձեր աջակցությունը համապատասխան ստորաբաժանմանը կազմակերպել ապրանքների

ընդունման գործընթացը, հակառակ դեպքում մեր ընկերությունը կհայտնվի ծանր ֆինանսական վիճակում:

18.12.2019թ գրությանը պատասխան է արվում 26.12.2019 թվականին, որով հայտնում են, որ համաձայն պայմանագրի 2.1.7 կետի պայմանագր էական խախտում է համարվում ապրանքի մատակարարման ժամկետի 30 օրից ավելի խախտումը, ուստի գնորդը, 31.11.2019 թվականից սկսած իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը:

ՈՒշագրավ է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 17.12.2019թ գրությունը, որով հայանում է, որ ապրանքի ընդունումը եւ ֆինանսական փաստաթղթերի ժամանակին ներկայացնելը տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել պայմանագրի ժամկետի ավարտից հետո:

Այսպիսով վերլուծելով վերոգրյալ փաստերը, արձանագրում ենք, որ 2019թ ապրիլի 19- ին Ընկերության կողմից անհրաժեշտ փասաաթղթերի փաթեթը ներկայացնելուց հետո շուրժ 3 ամիս Պաավիրատուն իր գործողություններում հապաղել է խախտելով օրենքով եւ կարգով սահմանված բոլոր ժամկետները: Պատվիրտաուին ներկայացրել ենք 2-րդ չափաբաժնի մաաակարարման խնդիրների մասին, որոնք ըստ էության անհաղթահարելի են եղել մաաակարարի համար: Այնուհետեւ մատակարարվող ապրանքը Հայաստանում գտնվելու պարագայում Պատվիրատուն կրկին գործել է ինչպես 2019թ ապրիլի 19-ից հետո, կարծես առանց իրավիճակի էական հանագամանքները քննարկելու, իսկզբանե միտված է եղել պայմանագիրը միակողմանի լուծելու: 07.12.2019 թվականից Պատվիրատուն իրազեկված է եղել, որ անհրաժեշտ ապրանքը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, սակայն ժամանակը ռացիոնալ չտնօրինելու արդյունքում պատճառաբանում են, որ տեխնիկապես հնարավոր չէ ապրանքն ընդունել: Այն պատճառաբանությունը, որ խնդիրը տեխնիկական է եւ բավականաչափ ժամանակ չունեն որպեսզի փորձարկեն մատակարավող ապրանքը, որեւէ իրավական հիմնավորում չունի, քանի որ ապրանքի ընդունման կամ մերժման համար իրավական ակտով սահմանված է 5 օրյա ժամկետ, որի ընթացքում Պատվիրատուն պետք է տա եզրակացություն, ողջամտորեն հարց է առաջանում ինչու Պատվիրատուն այդ ժամանակը չի օգտագործում ապրանքի ընդունումը կազմակերպելու համար, այլ ժամանակը ձգում է եւ միակողմանի լուծում պայմանագիրը:

Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմք հանդիսացած 2.1.7.1 կետի բ/ ենթակետը իրավունք է եւ ոչ պարտականություն: Ապրանքը պատշաճ որակի մատակարարման դեպքում Պատվիրատուն կարող էր 9 օր ուշացումով ընդուներ մատակարաումը, հաշվի առնելով նաեւ, որ այդ ուշացման պատճառը չի եղել մատակարարի անգործությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելու եւ (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաեւ նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետեւանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաեւ այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:»:

4. <u>ՍՑ-LO-2020/30 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ-Սա» ՍՊԸ-ի միջև 15.08.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր թիվ 1):

Կնքված Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն: Սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքների վերջնաժամկետը՝ մինչև 30.09.2019թ.-ը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ-Սա» ՍՊԸ-ի միջև 30.09.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի կից թիվ 1

փոփոխությունը, համաձայն որի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարման ենթակա ապրանքների վերջնաժամկետը սահմանվել է մինչև 30.10.2019թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 08.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ-Սա» ՍՊԸ-ի միջև 15.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծվել է, հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետները):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2020թ. թիվ 26/26-1/209-2020 գրությամբ «Էլ-Սա» ՍՊԸ-ին և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման

օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-

գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել՝ ապրանքագրով սահմանված ժամկետից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ-Սա» ՍՊԸ-ի միջև 15.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-

ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է մատակարարման ենթակա ապրանքների վերջնաժամկետը՝ մինչև 30.09.2019թ.-ը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ-Սա» ՍՊԸ-ի միջև 30.09.2019թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի կից թիվ 1 փոփոխությունը, համաձայն որի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարման ենթակա ապրանքների վերջնաժամկետը սահմանվել է մինչև 30.10.2019թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում 08.01.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլ-Սա» ՍՊԸ-ի միջև 15.08.2019թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-19/4-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծվել է, հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները (խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետները):

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Սույն գործում առկա փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար վերջինիս մեղքի բացակայությունը չի ապացուցվում, ինչպես նաև չի ապացուցվում այն փաստը, որ Մասնակիցը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ուստի, նման պայմաններում, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլ-Սա» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Սույն դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-19/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցները հանդես են եկել համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), ուստի մասնակիցները պետք է կրեն համատեղ և համապարտ պատասխանատվություն, հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.01.2020թ. թիվ 26/26-1/209-2020 գրությամբ «Էլ-Սա» ՍՊԸ-ին և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/30 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլ-Սա» ՍՊԸ-ին և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**